ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար սեղան թափքով մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/26» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«27» հունիսի 2023թ.
Ժամը՝ 17:15

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/26» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 12-րդ օրվա (26.06.2023թ.)՝ ժամը 10:00-ն:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնման գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և գնման հայտով սահմանված է սեղան թափքով մեքենաների ձեռքբերման համար կանխատեսվող գնման ընդհանուր գինը.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ ապրանքի ձեռքբերման համար կանխատեսվող գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Սեղան թափքով մեքենաներ	30 000 000

3. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

4. Տեղեկություն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ.

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահին՝ 2023թ.-ի հունիսի 26-ին՝ ժամը 10:00-ին, Համակարգից ստացված տեղեկատվության համաձայն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը չի կայացել մասնակից չլինելու պատճառով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

Նորայր Աղամալյան

Տիգրան Զեյնալյան

Անդրանիկ Աբգարյան

Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան